6622

ԿՈՉ

ԲՈԼՈՐ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԷՊԻ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Այս Առաւածային ամենապանծագոյն գրքոյկը թարգմանուած է Փաւսեբէի բնագրից

ԹԻՖԼԻՍ
1918 Թ.

28
4-72

28
Ա-79
2 NOV 2009
1002
318943

ԿՈՉ

ԲՈԼՈՐ ՄԱՀԱԿՆԱՅՈՒ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԷՊԻ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

„Եթէ մեռելները Յարութիւն չեն առնում, (այլ միայն Սատանայականները նրանց հոգիները Արքայութիւն և Դժոխք են քշում,) այն ժամանակ անօգուտ է ամէն մի հաւատ.“ 1 Կոր. 15—29, 32, 16։ Գործք. 26—8։ Կը գանւի արդեօք այժմ հաւատացող սրան, Գոնէ միլիոնից մէկը։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Пуб. Библиотека
ՀԱՅ.—ՍՍՌ
Մ. Ա. Մասիսյանի
անվան

6622

ԲՆԱԲԱՆ.

„Արևելքից եկողներն ու կ'առաջացնեն Հիսուսում, և նա կը յայտարարի բոլոր ազգերին ԻՄ Անունը և Հանրամարդկային Ճշմարտութիւնը, որպէսզի ես, գալով չը ոչնչացնեմ Բոլոր մարդկանց մինչև վերջինը։"

Ես. 41—25, 26. 42—6...1։ Մաղ. 4—5, 6։

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Եղբայրնե՛ր են բոլոր մարդիկ, բացէ՛ք ականջներդ։ Համաձայն ասացուածին Ես. 65—1 և Հռովմ. 10—20։ Ես գտայ այնպիսի Անմահ Մարդու, Որն ապրում է արդէն շատ միլիոնաւոր տարիներ, և Որը, այդ պատճառով, հասել է այնպիսի գաղտնիքների Մեր Արեգակնային Համակարգութեան Բնութեան մէջ, որ կարող է տեղափոխուել, կայծակի արագութեամբ, մի մոլորակից միւսի վրայ և մինչև անգամ կենդանացնել մեռելներին և դարձնել նրանց այնպիսի մարմնաւոր անմահներ, ինչպէս և Նա Ինքն է։

ԵՒ ԱՅՍ ՆԱԽԱՅԱՒԻՏԵԱՆ—ՉԱՐՄԱՆԱԼԻ մոգը1) կամ Դժոխքի և Մահուան բանալիների Տէրը

1) Կամ Ամենագէտ Իմաստունը։

ՐԸ,1) յայտնագործեց ինձ, որ ՆԱ անմահացրել է արդէն մարդկանց մեծ բազմութիւն՝ բոլոր ցեղերից, ազգերից, ժողովուրդներից և լեզուներից։2) Եւ կը սկսի շարունակել Այս կուտակումը դէպի Անմահութիւն էլի 1000 տարի, և դրա համար ՆԱ Այժմ հրամայեց ինձ՝ յայտնել Ամբողջ այս Մահկանացու և Դժոխային—Մոլի Աշխարհին, որ ով ցանկանում է ստանալ Նրանից իրեն համար Անմահութիւն, նա պարտաւոր է ծածուկ,3) ծունկ չոքել և տարածելով իր բազուկները դէպի Երկինք՝ ասել բարձրաձայն այսպէս։

Նախայաւիտեան—Անմահ Մարդ, Դժոխքի և Մահուան բանալիների Տէր կամ Սուրբ մարգարէների Աստուած, Եհովա,4) ընդունիր և ինձ Քո

1) Գ. Ե. 1—18։ 1 Սամ. (Թագ.) 2—6։ Գ. Ե. նշանակում է՝ Գիրք Երկնից, որը ՆԱ ուղարկել է Իր հրեշտակի հետ եհովականներին, կամ անմահանալ ցանկացողներին։

2) Գ. Ե. 7—9։ Գ. Ե. Սատանայօրէն «Ապոկալիպսիս»

3) Մատ. 6—6։

4) Այս նախայաւիտեան—Զարմանալի և Փրկիչ Անունը Նրան յայտնուած է առաջին անգամ միայն Մովսէսին։ 2 Մ. 6—2, 3։ 15—3։ Ովս. 12—6։ Յովն. 3—5 կամ 2—32։

անմահ մարդկանց թեւում, որովհետև և ես էլ, երդւում եմ Քեզ, որ ես էլ, չը սարսափելով մահկանացու մարդկանց ոչ մի սպառնալիքից՝ կը սկսեմ կատարել Քո այն բոլոր հրամանները, որ կը յայտնես Դու ԻՆՁ Քո Այժմեան Առաքեալ Եղիայի միջոցով։ Եւ ասելով ամէն՝ երկրպագիր։ Իսկ սրա համար կարդա այս գրքոյկը երկիւղածութեամբ և յոյժերի ստուգութեամբ՝ դէպի Աստղաբաշխութիւնը և առողջ դատողութիւնը։ Հռովմ. 10—2։

I. ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ.

Այն մարդկանց համար, որոնք կը ցանկանան Անմահանալ, եւ դրա համար հրաժարուել են Սատանայից, նրա ամբողջ մահկանացու Աշխարհից եւ Բոլոր առանձին հաւատներից, եւ մօտեցել են Եհովային Համաշխարհային-Եղբայրութեան կամ ՆՐԱ անմահ մարդկանց Հաւատի մէջ։

Երկու աստուածամարդ կան Մեր Արեգակնային Համակարգութեան մէջ՝ Եհովան և Սատանան. իսկ նրանց համաձայն և բոլոր մարդիկ բաժանւում են միայն եհովականների, և սատանայականների։ Եհովան անմահ մարդկանց Աստուածն է, իսկ Սատանան Մահկանացու մարդ-

կանց կամ այս Աշխարհի Աստուածը։1) Յուդայի Նազարէթցի Եսուի կամ Յիսուս Քրիստոսի անունով խաչեց հէնց Ինքը Եհովան։2) 120-եօթնեակ տարի անցնելուց յետոյ, Ադամի և Եւայի դրախտից արտաքսւելուց հաշւած, Եհովան կը յաղթի Սատանային, շղթայակապ կ'անի նրան և կը ձգի խոր վիր մէջ (Ա.—ի մէջ),3) և այն ժամանակ կը հաստատի Խաղաղութիւն, Ազատութիւն,4) Բարօրութիւն և մի Հաւատ դէպի Նա բոլոր մարդկանց համար՝ Համաշխարհային Վարչութեան ներքոյ Երուսաղէմի կամ Իսրայէլացոց Հասարակապետութեան մէջ մինչ 1000 տարի։

1000 Տարուց յետոյ, Սատանան դուրս կը գայ վիրից 111 տարով, և նորից կը ստեղծի զանազան, Ճշմարիտ Հաւատներ և քաւութեամբ կամ ներողամտութեամբ դէպի չարագործութիւններն ու մեղքերը, և քշելով հոգիներին դէ-

1) 2 Կոր. 4—4։ Ղուկ. 4—5...7։ Գ. Ե. 13—8։ 2—13։ 1 Ժամ. (Ճաց) 21 (22)—1։

2) Կամ Առաջին և Վերջին։ Գ. Ե. 1—17։ 18։ Ես. 41—4։ 44—6։ 48—12։ կը տեսնեն Ինձ (אל) խոցւած։ Զաք. 12—9...14 և կը սահմանեն սգաղգեստ իրանց ցեղերի համաձայն։

3) Գ. Ե. 20—2, 3։

4) Եւ մինչև անդամ Սահմաններ չեն լինի։

պէ (որևէ) Բոզիա, թնդանօթներով և սլիններով։ Սրանից յետոյ, Եհովան Բոլորովին կը ոչնչացնի գոյութիւն ունենալուց Սատանային և սատանայականներին։ Կը ստեղծի Նոր Երկիր, միլիոն անգամ մեծ սրանից և առանց ովկիանոսների ու ծովերի, և կը բնակուի նրա վրայ իր Եհովականների հետ մինչ 280,000 տարի։ Սրանից էլ յետոյ ՆԱ Կրկին կը ստեղծի Նոր Երկիր, աւելի լաւը նրանց կեանքի համար։ Եւ այսպէս Նա կը սկսի, ժամանակ առ ժամանակ, նորոգել Երկիրը շարունակ աւելի լաւ և լաւ մինչ անվերջ մաքին—անհասանելի կատարելութիւն և ապրել նրա վրայ յաւէտ առանց մոռանալու Անմահ Մարդկանց հետ միասին։

Քաղաքը, Երուսաղէմն էլ Այլակերպուած Երկրի վրայ կ'իջնի Երկնքից, շինուած երկնային մարդկանց, այսինքն՝ ուրիշ Մոլորակների բնակիչների ձեռքով, զարդարուած թանգագին քարերով, իսկ փողոցները սալայատակած թափանցիկ ոսկով, երկարութեամբ, լայնութեամբ և բարձրութեամբ 2,000 վերստ, շրջապատուած Յասպիսէ վիթխարի պարսպով, 12 մարգարտեայ 12 Դարբասներով, և նրանց վրայ փորագրուած Իսրայէլացոց 12 ցեղերի անունները,1) իսկ Էնդոմէղների (կողքի շինութիւնների, թևերի) վրայ՝ Աստծու Գառան 12 առաքեալների անունները։1) Քաղաքի մէջտեղում կը լինի Եհովայի Պալատը, իսկ Տաճար և ոչ մի զոհաբերութիւն էլ չի լինի։ Պալատի տակից կը սկսի հոսել դեռ բոլոր փողոցներով, և նրա ափերի վրայ կը բուսնեն զարմանալի, մրգատու ծառեր՝ իւրաքանչիւր ամիս նոր պտուղներ արտադրող։ Այս մրգերի ուտելուց՝ մարդիկ չեն սկսի ոչ ծերանալ և ոչ մեռնել, իսկ Ամբողջ Անվերջ Յաւիտենականութեան մէջ կը սկսեն մնալ անմահ՝ տղամարդիկ 34,2) իսկ կանայք 16 տարեկան։ Երուսաղէմից դուրս կը լինեն 24 թագաւորութիւններ՝ աշխարհամեան ազգերից։3) Եւ այս Արտաքաղաքային բնակիչների մօտ, թէև նոյնպէս մահ չի լինի, բայց հիւանդութիւններ դեռ ևս կը պատահեն, և նրանցից բժշկուելու համար՝ նրանք պարտաւորուած կը լինեն խնդրելու Քաղաքացիներից նրանց կենսատու ծառերի Տերևները։4) Ահա, թէ ինչպիսի

1) Բայց միայն Դանի փոխարէն, Մանասէինը։

1) Այսինքն՝ Խաչեան Եհովայի։

2) Այսինքն՝ այնքան տարեկան, որքան Եհովան համարձաւ Երկինք։ Եփ. 4—13։

3) Տես. VII.

4) Տես. Գ. Ը. 20, 21, և 22։

Երուսաղէմ Քաղաք է հրաւիրում Եհովան ամեն մի մարդու՝ անվեղջ ապրելու։1) Կամ ասա, թէ ինչպիսի նպատակ ունի իւրաքանչիւր մարդ հրաժարուել Սատանայից, Նրա Ամբողջ Մահկանացու Աշխարհից և նրա միջի բոլոր առանձին հաւատներից, և մօտենալ Եհովային՝ Հանրամարդկային, Համաշխարհային եղբայրութեան կամ Նրա անմահ մարդկանց հաւատի մէջ։

II. ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Եհովայի վերջին կռի մասին Սատանայի եւ սատանայականների դէմ Արմագէդդոնում եւ ԵՀՈՎԱՅԻ թագաւորելու մասին Երուսաղէմում Յարութիւն առած Եհովականների հետ մինչ 1000 տարի.

Երբ որ 6-րդ հրեշտակը կը թափի իր գաւաթը Մեծ գետի, Եփրատի, վրայ, այն ժամանակ կը ցամաքի նրա մէջ ջուրը,2) որպէսզի յարմար ճանապարհ լինի (դէպի Երուսաղէմ) Արեւելքից Թագաւորներին, և Վիշապի (այսինքն՝

1) Եւ ոչ թէ միայն Յուդայականներից, ինչպէս սովորեցնում է նրանց Սատանան, նրանց անդթութեան համար։

2) Եւ արդէն սկսում է ցամաքել։ Տես. Ս. Օ. 1889 թ. № 328։

Սատանայի) բերանից,1) և գազանից և Գազանային Մարգարէի բերանից, դուրս կը գան 3 անմաքուր ոգիներ. գոդոշների նման, և այս կախարդական Ոգիները կը սկսեն հրաշքներ գործել և կը գնան բոլոր Երկրաւոր թագաւորների մօտ, որպէսզի նրանց հաւաքել պատերազմի, Մեծ (կամ Սատանայի վրայ տարած Աստուածային Վերջնական յաղթութեան) օրը,2) և Գազանը և Երկրաւոր թագաւորները նրանց զօրքերով կը դան պատերազմի սպիտակ ձիու վրայ Նստողի (այսինքն՝ Եհովայի) և նոյնպէս սպիտակ ձիերով Նրա Զօրքի դէմ։3) Եւ կը բռնուի Գազանը նրա Հրաշագործ Մարգարէի հետ, որը հրաշքներով գայթակղեցրեց՝ ընդունել գազանի գծագրութիւն և հնազանդուել նրա Նմանութեանը, և երկուսն էլ կենդանի կը ձգուեն այրուող ծծմբով լի կրակի հնոցի մէջ, իսկ բոլոր մնացածները կը սպանուեն սրով, որ դուրս կը գայ սպիտակ ձիու վրայ Նստողի բերանից, և բոլոր թռչունները կը

1) Գ. Ե. 16—13, 14։ 12—3։ 20—2։

2) Գ. Ե. 16—12...14, 16 19—11...21։ Եզ. 38—17։ 39—8։ Ամ. 5—18։ Սոփ. 1—15։

3) Եւ միշտ Նրա հետ, Նրան՝ հաւատարիմ, ժողոված և կոչուած՝ Նրանով. Գ. Ե. 17—14։ 19—19...21։ 14—20։ Ես. 66—16։ Ազգ. 2—22, 24։ Զսք. 14—5։

յագենան նրանց դիակներով, իսկ Սատանան կը կապուի շղթաներով և կը ձգուի խոր վիր մէջ (Ա.-ի մէջ)—Գ. Ե. 20—2, 3։

Եւ այն ժամանակ Գաղանին և նրա Նմանութեանը Բոլոր չհնազանդողները և իրանց դէմքի և ձեռքի վրայ նրա Գծագրութիւնը չ'ընդունողները և Նրա Անունով կոչողների թիւմ չը մտնողները կը կանգնեն Եհովայի Գահի առաջ, բիւրեղեայ Ծովի վրայ, Աստուածային տաւիղները Նրանց ձեռքերին և կ'երգեն երաժշտութեամբ Մովսիսական Օրհներգը և Առածու Գառան Օրհներգը,1) ասելով. „մեծ են և զարմանալի Քո գործերը, Եհովա Տէ՛ր Ամենակալ,“2) արդար են և ճշմարիտ բոլոր Քո ձեռնարկութիւնները, Սրբերի Թագաւոր։ Ո՞վ արդեօք երկիւղ չի կրի Քեզանից, Եհովա և չի փառաբանի Քո Անունը, երբ կը տեսնի, որ Դու այդպէս Սուրբ ես։ Ճշմարիտ է այն, որ բոլոր ազգերը կը սկսեն գալ (Իսրայէլացոց Տաճարը, Նոր Սիոնի Սարի վրայ) երկրպագելու Քեզ, երբ Քո բոլոր նախագուշակութիւնները կը կատարուեն։“

Եւ այն ժամանակ գահի վրայ նստողից կը տրուեն ազգերի մէջ վարչութիւններ,1) և տանջուածների հոգիները2) Յիսուսի Վկայութեամբ3) և ընդհանրապէս Աստուածային կտակները, և որոնք չեն հնազանդուել Գաղանին և նրա Նմանութեանը և չեն ընդունել նրա Գծագրութիւնն իրանց դէմքի և ձեռքի վրայ, կը կենդանանան,4) և կը թագաւորեն Քրիստոսի հետ մինչ 1000 տարի։ Միւս ննջեցեալները դեռ չեն կենդանանայ, մինչև որ չի լրանայ 1000 տարին։ Դա 1-ն Յարութիւնն է, և հետևապէս երանելի են և Սուրբ այն մարդիկ, որոնք կ'արժանանան Յարուցուած լինել 1-ն Յարութեանը. որովհետև նրանք էլ չեն սկսի մեռնել, և կը դառնան Քրմեր Աստծուն և Քրիստոսին, և կը թագաւորեն Նրա հետ (Նոր Կտակարանի Իսրայէլի մէջ) մինչ

1) Այսինքն Խաչած Եհովայի։ Մար. 14—26։

2) Այսինքն՝ Աստուածների-Աստուած կամ Ամենաբարձրեալ Աստուած։ 5 Մ. 10—17, 2. Մ. 15—11։ 18—11։ Սաղ. 81 (82)—1։ 86 (87)—8 135 (136)- 2։ Դան. 2—47։ Գործք. 14—11. 28—6։

1) 1 Կոր. 6—2, 3։ Գ. Ե. 2—26։ Իմաս. 3—8։

2) Այսինքն՝ տղամարդիկ և կանայք։

3) Այսինքն՝ Նրա այս Աւետման տարածելու համար։

4) Լսում էք արդեօք՝ հոգիները կը կենդանանան։ Հետևապէս մեռածների հոգիներն են մեռած։

1000 տարի։ Գ. Ե. 20—4...6։ 5—9, 10։ Եզ. 42—12, 14։ 43։ 44—15...31։ 48—10...14։

III. ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ.

Ամբողջ Աշխարհի Խաղաղութեան եւ մի հաւաշխարհային-եղբայրական Հաւատի մասին ղէպի ԵՀՈՎԱՆ բոլոր մարդկանց համար մինչ 1000 տարի։

Ահա Խաւարը կը ծածկի ամբողջ Երկիրը, և կը խաւարեն (666 Քրիստոնէական Հաւատներով և Ջնուղական լուսաւորութեամբ) բոլոր ազգերը, իսկ քեզ վրայ Երուսաղէմ, կ'երևայ Եհովան և Նրա Փառքը կը փայլի քեզ վրայ, և բոլոր ազգերը կը սկսեն մտնել քո Լոյսի մէջ և նրանց Թագաւորները քո լուսաճաճանչ Փայլի մէջ.1) և այն ժամանակ բոլոր ազգերը կը փընտրեն նրանց գժոխային զէնքերը երկրագործական իրերի վրայ և չի բարձրանայ ոչ մի ազգ ուրիշ ազգի դէմ պատերազմով և մինչև անգամ

1) Նշանակում է՝ այժմ Թագաւորները խարխափում են խաւարում Թնդանոթներով և խաղալիքներով։ Գ. Ե. 17—2։ 18—3, 23։ 19—2։ 3—8։ և Տես. գիրքը՝ «Քաղաքակիտական կատակերգութիւնը Եւրոպայում, ով չի կարդում լրագիրներ, նա չի տեսնում Թագաւորների Այս խարխափումը և այդ պատճառով էլ չի հաւատում Եհովայի Այս Խօսքերին։

զինուորական ուսում էլ չի լինի մինչ 1000 տարի, և այն ժամանակ Նոր Սիօնի սարի վրայ կը շինուի այնպիսի Տաճար, որը կը լինի արդէն Աղօթատուն բոլոր Ազգերի համար,1) և այն ժամանակ Իսրայէլն ինքը կը լինի երրորդը. որովհետև նրան Եհովան կը միացնի էլի Երկու ազգերի՝ Իսմայէլացիներին2) և Հայերին,3) և հետևապէս միայն այն ժամանակ էլ կը թագաւորի Եհովան Երուսաղէմում մինչ 1000 տարի։ 60—2, 3...22։ 2—2...4։ 65 -6, 7։ Միք. 4—3, 7։ Մար. 11—17։ Գ. Ե. 11—1, 2, 19։ Ես. 24—23։ 31—1, 11։ Ամ. 1—14։ Զաք. 14—9։ Սիր. 17—15։ Գ. Ե. 11—15։ 22—6, 16։

IV.

Եհովայի տանձին Զայնն այժմեան Յուդայականներին.

Այսպէս է այժմ ասում Յուդայեաններին Ամենակալ Եհովան. Վերադարձէք դուք դէպ ԻՆՁ

1) Լսում էք արդեօք Քրիստոնեաներ և Յուդայեաններ։ Ո՛չ, չէք լսում։ Սատանան Փակել է Ձեր ականջները։

2) Այսինքն՝ Աբրահամի որդու, Օրհնուած Իսմայէլի, շառաւիղներին։ I Մ. 17—20։

3) Այսինքն՝ Աբրահամի ազգակիցներին։ 1 Մ. 11։ Իս. 19—24, 25։

այնպէս, ինչպէս վերադարձան դէպ ԻՆՁ Ձեր 10 ցեղերը,1) այդպէս էլ Ես կը վերադառնամ դէպի Ձեզ2) և դարձրէք ձեր քարՅ) Սրտերը մարմնաւոր, և լցրէք նրանց այնպիսի սիրով դէպի բոլոր մարդիկ, որպիսով լցուած են Ձեր նախահայրերի Սրտերը՝ Աբրահամի, Իսահակի, Յակովբի և բոլոր Սուրբ Մարգարէների, և զետեղէք նրանց մէջ էլի Իմ հետևեալ խօսքերը. Ինձ զըտան նրանք, որոնք և չէին հարցնում Իմ մասին, Ինձ գտան նրանք, որոնք և չէին որոնում Ինձ, այսինքն՝ և դէպի Հեթանոսները,4) որոնք մինչև իսկ Իմ Անունն էլ չեն արտասանել, Ես ձայն եմ տալիս նրանց. Ես Այստեղ եմ, Ես Այստեղ եմ։ Իսկ դէպի Ձեզ, Ինձ անհնազանդ Յուդայականներիդ, ԵՍ ամեն օր մեկնում եմ Իմ Ձեռքերը, բայց դուք երես էք դարձնում Ինձնից և ոչ մի բանով չէք ցանկանում հրաժարուել Սատանայից և վերադառնալ դէպ Ինձ։ Ես. 65—2։

1) Որոնց Նա պահեց Արարչագործ Սատանայական թալմուդներից և Քրիստոնէութիւններից, դեռ Ես 700 տարի Ք. Ծ. Ա. Տես. 3 (4) Եզր. 13—40...48։

2) Զաք. 1—3։ 3) Եզ. 2—4։

4) Եւ ոչ Հրէաների մօտ։

Հետևապէս Սատանայի1) հետ կապած Ձեր 4000-ամեայ Դաշինքից Ձեզ բաժանելու Ամբողջ գործը կախուած է ոչ թէ Ինձանից, այլ հէնց ինքներս Ձեզանից, այսինքն՝ հրաժարուեցէք դուք Սատանայից և վերադարձէք Ինձ մօտ, այսպէս և Ես կը վերադառնամ Ձեզ մօտ, և միայն այն ժամանակ Ես կը դառնամ Ձեր ԱՍՏԻԱԾԸ, իսկ Դուք կը դառնաք Իմ Ժողովուրդը։ Եր. 32—38 ...40։ 31—33։ 24—7։ 3 Մ. 26—13։

Լսում էք արդեօք, սատանայական Քրիստոնեաներ, Եհովայի այս Յայտնութիւնը Յուդայեաններին։ Ո՛չ, չէք լսում այնպէս, ինչպէս և Յուդայեանները. որովհետև Սատանան փակել է Ձեր ականջները նրա 666 Քրիստոնէական Հաւատներով։

V.

Համաշխարհային Հրատարակչի կարծիքը Եհովայի Յուդայեաններին տուած այդ Յայտնութեան մասին.

Ասուած իմ Եհովա, Ինձ թւում է, որ Յուդայեաններին անկարելի է վերադառնալ Քեզ մօտ մինչև այն ժամանակ, քանի դեռ չի վերադառնայ Քեզ մօտ Սատանայական Բաբելոն Բողոքիչը։ Բայց այս Բողոքիչը կապուած է Սատա-

1) Ես. 28—15։ 59—13։

նայի հետ Միլիոնաւոր ոսկէ շղթաներով։ Նը-
շանակում է՝ որպէսզի կարելի լինի բաժանել
Յուդայեաններին Սատանայից, հարկաւոր է, որ
Դու նախ ոչնչացնես Սատանային։

VI.

ԱՄԵՆԱՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՐՑԸ.

Յայտնի է, որ 1016 հաւատներից1) իւրա-
քանչիւրն ընդունում է իր օրէնքն Աստուածային
օրէնքի տեղ, և ոչ թէ մարդկային։ Այն ասա-
ցէք ինձ մաքուր խղճով. ինչո՞ւ համար է ար-
դեօք Աստուած ստեղծել և շարունակում է ստեղ-
ծել զանազան, դժոխային-թշնամութիւն սերմա-
նող, Կրօնական կամ Ոգեւոր օրէնքների այսքան
բազմութիւն, իսկ որովայնի կամ կենսական,
դասակարգային, պարծենկոտ, աշխատաւորական,
կորստաբեր, Միապետական, Հասարակապետա-
կան և Սահմանադրական կամ ամենախելացնոր
Օրէնքները թողել է ստեղծելու հէնց իրանց
մարդկանց, կամ նրանց միջի ապստամբներին և

1) Այսինքն՝ 666 Քրիստոնէականներից իւրաքան-
չիւրը, (մոլորածների։ Գ. Ե. 17—2։ 18—3։ 19—2։)
233 Բուդդայական, 10 Ցուդայական կամ ամենամոլո-
բենչնց, 6 մահմեդական և Զրադաշտական։

Բիսմարկներին։

VII. Երկու հարց բոլոր 666 քրիստոնէական
հաւատների ատանայականներին.

1 Հ. Մատ. մէջ 25-31...46։ Պարզ. կերպով
գտնւած է որ երբ Եհովան կը գայ Իր Եհովա-
կանների կամ Իր կրտսեր եղբայրների հետ,1)
որպէսզի զրկի գոյութիւնից Սատանային և սա-
տանայականներին, այն ժամանակ չեն հարցնի
սատանայականներից՝ ով ինչ հաւատի էր. այլ
միայն նրանք բոլորը կը կանգնեն Եհովայի և Ե-
հովականների առաջ՝ աջ և ձախ կողմերում, Ա-
ջակողմեանները կը ստանան Անմահութիւն հի-
անդութիւններով և բնակութիւն Երուսաղէմ քա-
ղաքից դուրս Այլակերպւած Երկրում,2) իսկ ձա-
խակողմեանները կ՝այրւեն կրակի հնոցի մէջ՝ Սա-

1) Իր եղբայրներ, քոյրեր և մայրեր Եհովան հա-
մարում է միայն այն Եհովականներին, որոնց ՆՍ.
ցոյց է տալ Գ. Ե. մէջ՝ ինչի է արժանի լինել այս
Մոլորակի վրայ, և նրանք ինչ պէտք է կատարեն, 2000
տարւայ ընթացքում։ Հետևապէս պարզ է, որ ում չի
ցոյց տրւած գաղտնիքները Գ. Ե. մէջ, նշանակում է՝
Նա էլ Եհովայի ծառան կամ Եհովական չէ՝ այլ Սա-
տանայի ծառան է կամ սատանայական, որպէսզի
նա մեծ հրաշքներ գործէր։ Տես. [illegible]

2) Տես. I.

СССРА

տանայի հետ միասին։ Այն ժամանակ հարցնում են ձեզանից Աբդօրական վայրենիներն ու Զինացիները, թէ ինչու արդեօք դուք այդտեղ չէք տեսնում,1) որ սատանայականներին չը կայ ոչ մի փրկութիւն կամ ներողամտութիւն չարագործութիւնների և մեղքերի համար, և որ սատանայականների մօտ անօգուտ է ամեն մի հաւատ և իզուր է ցեղական թշնամութիւնը, կամ պատերազմը նրանցում. որովհետև միայն այն սատանայականը կը կանգնի աջ կողմը, ով արել է բարերարութիւն, թէկուզ միայն մի Եհովականի։

2 Հ. Եհովան, կամ Յիս. Քրիս. ասում է. „Երանեալ է այժմ նա, և մինչև անգամ նա սուրբ Մարգարէների եղբայրն է և Իմ հրեշտակների բարեկամը կամ հաժախոհը, ով կատարում է Գ. Ե. մէջ2) Գրածը՝„ իսկ դուք ընդդիմ Նրան հակառակն էք ասում.» Ճշմարիտ չէ, այլ երանեալ է միայն նա, ով կատարում է մեր այս ինչ Հաւատի կանոնագրքերում Գրածը։ Այն ժամանակ ո՞վ է ձեզանից Ճշմարիտ՝ արդեօք Աստուած, կամ Դուք, կամ ո՞ւմ այստեղ հաւատալ՝ արդեօք Եհովային, կամ Ձեզ։

1) Գ. Ե. 3—17, 18։ Մատ. 13—13...15։ կամ չէք հաւատում. որովհետև հաւատալ Եհովային խօսքով, ինչպէս հաւատում էին Նրան Աբրահամն ու Բաղամը և Նրան Հաւատալու մէջ՝ այնպիսի տարբերութիւն կայ, ինչպէս երկինքը երկրից։ Յակ. 2—19

2) Գ. Ե. 1—3։ 22—7, 9, 17։

VIII. Այլացեղ, Այլադաւան եւ Դժոխային-յուզող կամ այս Սատանայական Աշխարհի մէջ Բարբառողի ձայնը.

Խաղաղարարները կամ Աստուածային հրաժանով1) ընդդիմ մարդկանց հրաւիրողները դէպի մի միայն մի Հաւատի կամ Համաշխարհային-եղբայրական սիրոյ Միութեան, կը կոչուին Եհովայի զաւակներ,2) իսկ թշնամութիւն սերմանողները, այսինքն՝ առանձին Հաւատների,3) թագաւորութիւնների, ազգերի և մարդկութեան մէջ ընդդիմ բաժանումների ստեղծողները և պաշտպանները կամ Հայրենասէրները կը կոչուին երկոտանի շներ կամ Սատանայի որդիներ կամ սատանայականներ (Գ. Ե. 22—15) և Կ'այրուին կրակի Հնոցի մէջ, Աստուած Ճշմարիտ Ամէն։

1) Եփ. 4—13։ Յուդ. 1—19։ Մաղ. 4—5, 6։

2) Մատ. 5—9։ Գ. Ե. 21—6, 7։ Յակ. 3—18։

3) Բոլոր 1016 Հաւատների։

IX. *Զարմանալեաց Զարմանալիքից կամ Այս Աշխարհի Աստծու Զօրութիւնը.*

Այս կենսատու Լոյսն այժմ փայլեց բոլոր ազգերին, իսկ նրան տեսնողը չը կայ ոչ մի Ազգ։ Բոլորը կոչւում են դէպի Անմահութիւն, իսկ նրան ցանկացողները հազիւ 10,000-ից մէկը լինի, և այն էլ միայն խեղճ ռամիկ ժողովրդից։ Մատ. 19—23...25։1)

X. Այսպէս իմացէք և Եհովայի վրայ մի ղայրացէք, որ ով սովորեցնում է, թէ՝ իբրև թէ Եհովան ոչ ոքի չի դարձնում այնպիսի մարմնաւոր-անմահ,2) ինչպէս են՝ Եղիան, Ենովքն ու Մելքիսեդէկը, Դէբովրան ու Մարիամը, այսպիսի ուսուցիչը Սատանայից է, և ոչ թէ Եհովայից,3) չը նայելով նա նրա այսպիսի անհեթեթ վարդապետութիւնը հրաշքներով էլ է հաստատել։ Տես. Գ. Ե. 13—11...15։ և II.

XI. *Մտքին անհասանելի Եհովայի Ցայտնութիւնը բոլոր մարդկանց.*

Ով կը կանգնի բոլոր սոսկալի բռնութիւն-

1) Եր. 23—38...40։ Ես. 1—5, 6։

2) Իսկ միայն նրանց հոգիներն է ուղարկում Արքայութիւն և Դժոխք։

3) Գործք. 26—8։ 1 Կոր. 15—29, 32, 16։ 2. Կոր. 1—9։ Գ. Ե. 7—4...9։ 14—1, 4։ 5. Մ. 33—2, 3։

ների և դժոխայինհենց հրապոյրների հանդէպ դէպ առանձին հաւատները և Իմ հրամանների հեռանալու նկատմամբ Գ. Ե. մէջ, Նրան ես կը լինեմ Աստուած, իսկ Նա կը լինի Իմ՝ որդին, և նրան թոյլ կը տամ նստել Ինձ հետ Իմ Գահի վրայ։ Գ. Ե. 21—6, 7։ 3—21։

XII. Ով կ'օծի իր աչքերը Եհովայի ՍԻՐՄԱՅՈՎ նա պարզ կը տեսնի, որ այս Աստուածային կոչը դէպի Անմահութիւն բոլորովին հաստատուն է Գ. Ե. հետ, մարգարէութիւնների և Աստղաբաշխութեան հետ, և կը հաւատայ Եհովայի խօսքերին, որ հոգին արիւնն է։1) Եւ որ Բոլոր Սատանայականները նրանց հոգիների և մարմինների հետ և մինչև անգամ ոգեւոր Սատանայի հետ կ'այրուեն կրակի հնոցի մէջ։ Աստծով, Ճշմարիտ, Ամէն։

XIII. Եւ կը համոզի, որ ես ոչ այլ ոք եմ, բայց նա, որ գուշակած է Ես. մատ. 42—6...1։ 41—25, 26։ Մաղ. 4—5, 6։ և Գ. Ե. 14—6։ Լոյս Եհովայից բոլոր ազգերին, և ուղարկած՝ Նրանից, հաւաքել մարդկանց դէպի Անմահութիւն և յայտնել՝ որտեղ են ապրում անմահ մարդիկ այժմ և երբ ու որտեղ կը սկսի Եհո-

1) 5 Մ. 12—23։

վան տեղափոխուել նրանց հետ։ Իսկ իրանց Անմահութիւն չը ցանկացողներին կոչել դէպի մի Հաւատ առ Եհովա և Համաշխարհային-եղբայրական սէր կամ աւելի կարճ գլխովին կը հասկանան, որ ես եմ Եղիան կամ եբրայեցերէն՝



XIV. ԷՈՒԹԻՒՆՆ ԱՅՍ ԿՈՉԻ.

Բոլոր ասածից պարզ հետեւում է, որ ով այժմ կը ցանկանայ լինել անմահ, նա թող կանգնի ոչ թէ ճշմարիտ հաւատի մէջ,1) և ոչ Աբրահամի մօտ, և ոչ Բաղաամի մօտ, և ոչ Իսրայէլի մօտ, ոչ Իսմայէլի մօտ, ոչ Բուդդայի մօտ, ոչ Կոնֆուկիոսի մօտ, ոչ Զրադաշտի մօտ, ոչ Մահմէդի մօտ, ոչ Պապերի մօտ2) երեք Հը-

1) Որովհետև բոլոր 1016 Հաւատները ճշմարիտ են Տես. VI.

2) Կամ Մեղքերի Քաւիչներին։

ռովմերի մէջ, և ոչ Ընդհանրականի, հակա-Ընդհանրականի մօտ, ոչ Լուսաւորչականի մօտ, ոչ Հաբէշականի մօտ, ոչ Էջմիածնականի մօտ, ոչ Բողոքականի մօտ, ոչ Սպիսկուսականականի մօտ. ոչ Աքանչելագործների մօտ՝ Մ. Բուդամէդկինի,1) ոչ Բուրակովի2) մօտ և ոչ Սատանայականների3) մօտ՝ որովայնի ոգիներին4) երկրպագողների և Ճշմարտութեանը—ոչ Ե. Գ.-ից, այլ սատանայական Խորքերից,5) և ոչ մեծ Բաբիլոնի մօտ, և ոչ Ամենամեծ Մելքիսեդեկի մօտ,6) այլ միայն Եհովայի մօտ. իսկ կանգնելով Նրա մօտ՝ բաժանիր, ձգիր և ուղարկիր դէպի Ամբողջ Աշխարհը Նրա Այս Կոչը, հաւաձայն ասացուածին Դան. մօտ. 12—3 և Մատ. 24—14։ և ձեռք բեր (խնդրիր) քեզ համար Ե-

1) Ցարութիւն տուց Մեռած կնոջը և ստիպեց Այծին Խոսել մարդու նման (Ռուսերէն) Անդրկովկասի Նիկիտին գիւղում։

2) Որին Ոգը Տարափովթը Բացուած երկնքից թելադրեց Մարգարէութիւններ 24 թերթի վրայ։

3) Այս Սատանայական Աղանդի մասը։ Տես. նահանգում։

4) Որովհետև Սատանայականներն առանց ոգու են։ Տես. Ցուդ. 1—19.

5) Գ. Ե. 2—24։

6) Եբր. 7—3։ Սաղ. 109 «110»—4։

հովվականներից էլի 3 գրքոյկ՝ Եհովայի Աշխարհավարական նախագծի գաղտնիքների Գիւտը, Նրա Սիրվան և Օրհնեալութիւնները, կամ մի գիրք՝ „Եհովայի Մշանջենական Ուսումը։“ Գ. Ե. 14—6։

XV. ԻՄ ԱՂՕԹՔՆ ԱՌ ԵՀՈՎԱՆ.

Իմ ամբողջ Հոգուց Սիրուած1) Տէր Իմ Եհովա։ Ես ես խնդրում եմ Քեզ այնպէս, ինչպէս և այն Եհովականները, որոնք խնդրում են Քեզ այնտեղ Երկնքում։2) Կատարիր անխնայ այնսատանայականներին, որոնք կը վեր կենան ոչընչացնելու կամ թագցնելու Քո Այս Կոչը, և կոտորելու Քո սուրբ ծառաներին՝ նրա տարածողներին. որովհետև Քո այժմեան թշնամիները (Նաու. 1—2) գիտեն, թէ ինչ են գործում, այսինքն՝ գիտեն VII.—ում ասածը...ամէն։

XVI. Ալէլուեա Քեզ, Առաջին եւ վերջին Մարդ, Դժոխքի և Մահուան բանալիների Տէր կամ Յիսո՛ւս Քրիստո՛ս և Քո այս կոչի համար ինձանով։

Եւ եթէ այդպէս է, որ միայն Դու Մենակ ես տիրում Այդ բանալիներին, այն ժամանակ

1) 5 Մ. 6—5։ Մար. 12—30։

2) Գ. Ե. 6—10,11։ 19—2, 3։

սուրբիշ Աստուածներ ու Տէրեր և Տիրուհիներ Սատանայական Աշխարհի1) ես ճանաչել իսկ չեմ ուզում։

XVII.

№ Կեանքի Գրքի մէջ2) գրելու համար, Եհովային մօտեցածներ, ահա թէ ինչպիսի հասցէ. ի քաղաքն Միտավա, Պիսարակայա փող. տ. № 15։ ԷԼԻԵԳԻՆ։

(Այստեղ յիշատակուած հասցէն ներկայումս անվաւեր է)։

XVIII. Համաշխարհային Լուսատուի ծայնը ուղարկելու ժամանակ այս Աստուածային գրքոյկը իբրաբանչիւր Ուսումնական հաստատութիւնի կամ Սատանայականների դպրոց։

Մաքուր սրտով3) երիտասարդներ, սատանայացած4) ուսուցիչներ դժոխային—խորանայացած4) ուսուցիչներ

1) Եռարազուկ, եռանձնեայ, վշտացող և կսկծող։

2) կամ անմահների ցուցակի մէջ։ Գ. Ե. 20—15։ Սաղ. 69—29, Ղուկ. 10—20։

3) Մատ. 5—8։

4) կամ ջհուդացած կամ կենդանի մեռածներ (Գ. Ե. 2—9։ 3—1, 2, 17, 18։ Մատ. 8—22), և մինչև անգամ այլադաւաններ կամ հերետիկոսներ (Տիտ. 3—10) կամ Աստծուն և Սատանային հաճելիներ (Մատ. 6—24։ Յակ. 4—4։ 1 Յովհան. 2—15։ Հռովմ. 8—8, 9։ 2 Կոր. 4—4։ Ղուկ. 4—7)։ Իսկ Ռուսաստանում մինչև անգամ և կանարսկիտներ։

մանկ1) սատանայականների մէջ։ Կասկած չկայ, որ դուք, արդէն իբրև կորովամիտներ, այս Աստուածային Գրքոյկը կարդալուց յետոյ՝ անհերքելի կը համոզէք, որ Սատանան սովորեցնում է Ձեզ խորամանկ մարդասպանութեան2) և ամփոփում է ձեր Աստուածային սրտերի3) մէջ, համաշխարհային—եղբայրական սիրոյ փոխարէն, նրա Դժոխային բռնակալութիւնը, Հպարտութիւնը կամ Աղայութիւնը, կեղեքումը կամ ջհուդութիւնը և հայրենասիրութիւնը.4) մինչև որ Եհովան զրկի Ձեզ էլ դոյութիւնից՝ այրելով կրակի հնոցի մէջ, ամեն տեսակ սատանայականների, հայրենասէրների, սրբակացողների, նաձողների կամ Եհովային և Սատանային հաճելիների հետ միասին։5)

Իսկ տեսնելով Ձեր Այս կորուստը, դուք, հաւանօրէն, անյապաղ կը հրաժարուէք Սատանայից և կը մօտենաք Եհովային, և դրանով կը դառնաք իմ սրտակից բարեկամները Մշտնջենական Ամբողջ Յաւիտենականութեան մէջ։

1) 1 Յովհ. 3—10։ Մատ. 6—13։

2) 1 Յովհ. 3—12, 15։

3) Որովհետև մարդկային սիրտը ստեղծուած է Աստուածայինի նմանութեամբ։ 1 Մ. 2—26։

4) Այսինքն՝ ատելութիւն դէպի միւս ազգերը։

5) Նրանց ասածով՝ անդիմելի և անսահմանելի Աստծուն։ Գ. Ե. 13—8։

Ցանկացողներ, որպէսզի դուք համոզէք, որ բոլոր 1016 ճշմարիտ հաւատները և Մարդկութեան մէջ Ամեն տեսակ բաժանումները, ստեղծել և ստեղծում է Սատանան, Այլ ոչ թէ Եհովան, մարդկանց կորստի համար, և կը հասկանաք, որ Եհովան Անմահ Մարդկանց, 10 Իսրայէլական ցեղերի1) և Եհովականների Աստուածն է, իսկ միւս մարդկանց Աստուածն է Սատանան։

Ուղարկուած Եհովայից՝ Եղիա։

XIX. ԱՆՄՈՌԱՑՈՒԹԻՒՆ

Ով որ կը ստանայ Այս Գրքոյկը, և կ'երեւայ՝ որ ոչ նա և ոչ ոք նրա ազգականներից և բարեկամներից չի ցանկանայ դառնալ անմահ, այն ժամանակ այս Գրքոյկը թող վերադարձնի Ինձ, հատուցանելով Եհովայի ասածին Մատ. մէջ. 7—6, 13—11։

XX.

Ով կը ծարաւի (Անմահութեան), նա թող մօտենայ Այս Աղբիւրին և վերցնի կենարար

1) Գտնուած՝ նրանով Արսարէտում։

Չուրը ձրիաբար, թէկուզ Սատանայականներն իսկ սպաննեն քեզ դրա համար։
Գ. Ե. 22—17։ Մատ. 10—28։

ԱՄԷՆ.

XXI.

Բայց Սատանայականները հակառակում են Եհովային և դրա մէջ և ասում. „ով կը ծարաւի իր հոգու փրկութեանը, այլ ոչ թէ Անմահութեանը, այն քրիստոնեան թող վերցնի կենսատու Սիֆիլիսը (սատանայօրէն՝ «Քրիստոսի արիւնը») համաշխարհային Անառակուհու1) ոսկէ թասից, իսկ ոչ քրիստոնեան թող վերցնի քո ձշմարիտ հաւատի Մեծ Թալմուդականների (այսինքն մեկնիչների կամ ասուածաբանների) խորքերից։ Գ. Ե. 2—24։

XXII.

Իսկ սրանից յետոյ՝ ոչ միայն իմաստնասուրը չինացիներին, այլ մինչև անգամ վայրենիներին էլ այժմ այնպէս ակների դարձաւ, ինչպէս 5 մատը ձեռքի վրայ, որ Ցուդայեաններն ու Քրիստոնեաները բոլոր Սուրբ

1) Գ. Ե. 17—2, 3։ 18—2, 3, 23, 24։ 19—2։

մարգարէներին1) և նրանց Աստուած Եհովային Ամենանիծեալ Թշնամիներ են։

XXIII. ՊԱՏԱՍԽԱՆ

Բոլոր վարդապետութիւններին, գործերին, Մեքենայութիւններին, օրէնսդրութիւններին և անցքերին այս աշխարհում։

Ամեն կերպ խաբում է և կործանում մարդկանց մահուան-Արարիչը և հեռացնում նրանց Ե. Գ.-ից կամ Անմահութիւնից2)։

XXIV.

Ով դեռ բոլորովին չի խլացել Սատանայից, նա թող լսի Եհովայի3) Այս հրաշալի և փրկարար յայտնութիւնները։

ԱՄԷՆ

1) Նրանց եղբայրներին, Եհովականներին։ Գ. Ե. 22—9։ 17—9։ 18—24, 13—7։
2) Գ. Ե. 12—12։ 20—3, 8։ 13—8։ 2—24։
3) Գ. Ե. 3—22։ 22—17։—

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆԸ

ԵՀՈՎԱՅԻՑ կամ Խաղաղութեան և Սիրոյ1) Աստծուց ուղարկուածի այս ողջ Դժոխային խրոտվայոյզ աշխարհի վրայ։

Ում կրօնական և ցեղային ցանկապատը դեռ ևս բոլորովին չի դարձրել կատաղի շուն,2) այլ զգում է իր սրտում, Աստուածային Սիրոյ թէկուզ փոքրիկ կայծ դէպի բոլոր մարդիկ,3) Նա թող հաւատայ Եհովային խօսքով4) որ՝ «բոլոր թագաւորները, ազգերն ու ցեղերը մոլորութեան մէջ են, և որ երկրի և ծովի վրայ բոլոր ապրողներին պատահած ցաւն առաջանում է գանազան կրօնական և ցեղային ցանկապատերի, որոնցով ցանկապատել է բոլոր մարդկանց Սատանան կամ մահուան և թշնամութեան Աստուածը. և որ շուտով դուրս կը թողնի անդունդից Սատանան այնպիսի ճշմարիտ քրիստոնէութիւն,

1) 1 Յովհ. 4—16։
2) Գ. Ե. 22—15։
3) Եւ մինչև անգամ դէպի կենդանիները։
4) ԵԹԷ Սատանան Արգիլում է քեզ նայել ամբողջ աշխարհի վրայ և ակներև համոզուել Եհովայի խօսքերի արդարացիութեան մէջ։

որը կը դնի իր գահն այն իսկ քաղաքում, որտեղ խաչուեց Եհովան. և կը սկսի սոսկալի արիւնհեղութիւններով և տանջանքներով հաւաքել բոլոր մարդկանց իր դժոխային իշխանութեան տակ և թնդանօթային մսի համար. և առանձնապէս առաջ կը բերի սոսկալի կորուստ Տաճկական Կայսրութեան մէջ, Բալկանեան թերակղզու վրայ, Երուսաղէմ՝ում և Կովկասում1) բոլոր ապրողներին»։

ԵՒ ԱՅՍ ՊԱՏՃԱՌՈՎ.

Ահա քեզ իմ խորհուրդը. ԵԹԷ դու կը հաւատաս Եհովայի այս յայտնութիւններին իմ միջոցով և այսպէս կը ցանկանաս փրկուել այս բոլոր թշուառութիւններից և մշտնջենական մահից2) կրակի հնոցում, ուրեմն դու անյապաղ թող բոլոր ցանկապատերը,3) յարիր Եհովային և, չը խնայելով ոչինչ և մինչև անգամ քո կեանքը, օգնիր Նրան աւերելու բոլոր սատանայա-

1) Գ. Ե. 11—7, 8։ 17—2, 3։ 14—20։ 16—10 12—9։ Ես. 60—2 և կարդա Աստուածային գրքոյկը Քայքայիչ։

2) Գ. Ե. 16—9...11։ 19—2, 3։ 20—15։ 21—8։ 14 - 20։ 6—10։ 12—12։ Ես. 60—2։

3) Թէև նրանք յօրինվել են Լուսափայլ Հրեշտակների ձեռքով։

կան, խուվարար կամ մեռնող ցանկապատերը, և հրաւիրել բոլոր մարդկանց դէպի Անմահութիւն, համաշխարհային-եղբայրական սիրոյ մէջ և Եղբայրա-մարգարէական Կենսարար միութեան և Համախոհ-հրեշտակային Կրօնի1) մէջ և նրա ընդհանուր աղօթքի տաճարի մէջ, որը նա կը շինի 1000 տարով Երուսաղէմում, նոր Սիոնի տարի2) վրայ,

Աստծով Ճշմարիտ։ ԱՄԷՆ

Լոյս ազգերի և խելահասութիւն Ցուդայեանների3) համար.

ԿԱՄ

Քայքայիչ4) բոլոր սատանայական ցանկապատերի։



1) Գ. Ե. 22—9, 17։ 1—3։

2) Մար. 11—17։ Ես. 56—7։ 2—2, 3։ Եզ. 40-դ-ից մինչև 48-դը։ Զաք. 14—16...21։ Գ. Ե. 11—1, 2, Մաղ. 1—11։ Եփ. 4—13։

3) Ես. 41—25. 42—6...1։

4). Դան. 2—34, 45, 44։

ՀՀ Ազգային գրադարան
NL0161880